

Առաջարկ

«Կրթական օբյեկտների հիմնանորոգում» պետական ծրագրի 2013-2015 թթ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերում ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի հանրակրթական դպրոցների կրթական օբյեկտների հիմնանորոգումն ընդգրկելու

1. Կրթահամալիրի Ավագ դպրոց-վարժարանի կրթական օբյեկտ

Ավագ դպրոց-վարժարանը (հասցեն՝ Ա. Բաբաջանյան 25) գործում է 1984թ. կառուցված 1500 սովորողի համար նախատեսված 11500 քառ. մ. մակերեսով տիպային դպրոցի շենքում: Շենքը գործում է որպես կրթահամալիրի Մայր դպրոց, որից օգտվում են կրթահամալիրի բոլոր սովորողները, ուսուցիչները, ծնողները: Շենքում, բացի 650 7-12-րդ դասարանցիներից, սովորում են կրթահամալիրի պետական քոլեջի ուսանողները, երաժշտության, պարի, մարզական, տեխնիկական ստեղծագործության, թատերական դպրոցների սաները: Շենքում են գտնվում կրթահամալիրի գրադարանը, բնագիտության կենտրոնը, դահլիճները: Շենքը հիմնանորոգման չի ենթարկվել: Անհրաժեշտ է հիմնանորոգել շենքի տանիքի հարթ հատվածը, փոխել պատուհանները, շենքի ողջ ծավալով կատարել ներքին հարդարման աշխատանքներ, կառուցել բացօթյա մարզահրապարակներ:

2. Կրթահամալիրի Արհեստագործական ավագ դպրոցի կրթական օբյեկտ

Արհեստագործական ավագ դպրոցը (հասցեն՝ Զ. Անդրանիկի 92/1) գործում է 1982թ. կառուցված 14 խմբանոց տիպային 4200 քառ. մ մակերեսով մանկապարտեզի շենքում: Շենքը մեր ուժերով հարմարեցվել է Արհեստագործական ավագ դպրոցի կարիքներին: Հիմնանորոգման չի ենթարկվել: Շենքում սովորում են 230 9-12-րդ դասարանցիներ, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական 1-ամյա ծրագրով 40 ուսանողներ: Անհրաժեշտ է հիմնանորոգել շենքի տանիքը, զուգարանները, փոխել պատուհանները, շենքի ողջ ծավալով կատարել ներքին հարդարման աշխատանքներ, կառուցել բացօթյա մարզահրապարակներ:

3. Կրթահամալիրի Գեղարվեստի ավագ դպրոցի կրթական օբյեկտ

Գեղարվեստի ավագ դպրոցը (հասցեն՝ Րաֆֆու 69/1) իր ցուցասրահ-մեդիակենտրոնով (հասցեն՝ Րաֆֆու 57) գործում է 1982թ. կառուցված 14 խմբանոց

տիպային 4200 քառ. մ մակերեսով մանկապարտեզի շենքում, ցուցասրահ-մեդիակենտրոնը տեղավորված է կրթական օբյեկտի հարևանությամբ գտնվող բնակելի շենքի 1100 քառ. մ. բացվածքում: Շինությունները մեր ուժերով հարմարեցվել են գեղարվեստի դպրոցի կարիքներին, հիմնանորոգման չեն ենթարկվել: Շենքում սովորում են 270 1-12-րդ դասարանցիներ: Դպրոցի նախակրթարանում գործում են 2-3 տարեկանների, 3-4 տարեկանների և 4-5 տարեկանների մանկապարտեզային խմբեր: Անհրաժեշտ է փոխել դպրոցի շենքի ազբոշիֆերային թեք տանիքը, նորոգել բացվածքի թեք տանիքը, զուգարանները, փոխել պատուհանները, շինությունների ողջ ծավալով կատարել ներքին հարդարման աշխատանքներ, կառուցել բացօթյա մարզահրապարակներ:

4. *Կրթահամալիրի Հիմնական դպրոցի կրթական օբյեկտ*

Հիմնական դպրոցը (հասցեն՝ Ծ. Իսակովի 52/6) գործում է 1984թ. կառուցված 12 խմբանոց տիպային 3600 քառ. մ մակերեսով մանկապարտեզի շենքում: Շենքը մեր ուժերով հարմարեցվել է Հիմնական դպրոցի կարիքներին: Հիմնանորոգման չի ենթարկվել: Շենքում սովորում են 160 1-9-րդ դասարանցիներ: Դպրոցի նախակրթարանում գործում են 2-3 տարեկանների և 4-5 տարեկանների մանկապարտեզային խմբեր: Անհրաժեշտ է հիմնանորոգել շենքի կաթացող հարթ տանիքը, զուգարանները, փոխել պատուհանները, շենքի կես ծավալով կատարել ներքին հարդարման աշխատանքներ, կառուցել բացօթյա մարզահրապարակ:

5. *Կրթահամալիրի Բ-4 թաղ-ի հանրակրթական դպրոց-պարտեզի կրթական օբյեկտ*

Բ-4 թաղ-ի հանրակրթական դպրոց-պարտեզը (հասցեն՝ Ա. Բաբաջանյան 38/1) գործում է 1983թ. կառուցված 14 խմբանոց տիպային 3200 քառ. մ մակերեսով մանկապարտեզի շենքում: Շենքը մեր ուժերով հարմարեցվել է հանրակրթական դպրոց-պարտեզի կարիքներին: Հիմնանորոգման չի ենթարկվել: Շենքում սովորում են 270 1-6-րդ դասարանցիներ: Դպրոցի նախակրթարանում գործում են 2-3 տարեկանների, 3-4 տարեկանների և 4-5 տարեկանների մանկապարտեզային խմբեր: Անհրաժեշտ է հիմնանորոգել շենքի տանիքը, զուգարանները, փոխել պատուհանները, շենքի կես ծավալով կատարել ներքին հարդարման աշխատանքներ, կառուցել բացօթյա մարզահրապարակներ:

6. *Կրթահամալիրի Բ-1 թաղ-ի հանրակրթական դպրոց-պարտեզի կրթական օբյեկտ*

Բ-4 թաղ-ի հանրակրթական դպրոց-պարտեզը (հասցեն՝ Ա. Բաբաջանյան 47/1) գործում է 1982թ. կառուցված 14 խմբանոց տիպային 3200 քառ. մ մակերեսով մանկապարտեզի շենքում: Շենքը մեր ուժերով հարմարեցվել է հանրակրթական դպրոց-պարտեզի կարիքներին: Հիմնանորոգման չի ենթարկվել: Շենքում սովորում են 290 1-6-րդ դասարանցիներ: Դպրոցի նախակրթարանում գործում են 2-3 տարեկանների, 3-4 տարեկանների և 4-5 տարեկանների մանկապարտեզային խմբեր: Անհրաժեշտ է հիմնանորոգել շենքի տանիքը, զուգարանները, փոխել պատուհանները, շենքի կես ծավալով կատարել ներքին հարդարման աշխատանքներ, կառուցել բացօթյա մարզահրապարակներ: